

### Արձանագրություն 3

**«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի**

ք. Երևան

«30» նոյեմբերի 2020թ.

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

**Նախագահ՝**

Պետրոս Մանուկյան

**Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող աշխատակազմ**

Զարուհի Բախշյան

Մարի Ստեփանյան

**Քարտուղար՝**

Երանուհի Սարգսյան

### Օրակարգ

#### **1. Ընթացակարգի գնահատում**

1.1 «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 17-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում առաջարկվել էր դեղահատեր 200մգ, իսկ հրավերում պահանջվել էր դեղահատ բաժանելի 200մգ, 38-րդ չափաբաժանում առաջարկվել էր 15մլ սրվակ-կաթոցիկ, իսկ հրավերում պահանջվել էր 10մլ սրվակ-կաթոցիկ,

«Մ.Լ.Ն.Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 128-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում առաջարկվել էր 3մլ փամփուշտ, իսկ հրավերում պահանջվել էր 10մլ ապակե սրվակ:

Ուստի գնահատող հանձնաժողովը որոշել էր մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել վերոգրյալ մասնակիցներին շտկել առկա անհամապատասխանությունները:

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն և «Մ.Լ.Ն.Ֆարմ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չտկել են առկա անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0**


1.2 Հաշվի առնելով, որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, 2020թ. դեկտեմբերի 3-ին, ժամը 13:00-ին, հրավերով պահանջված փաստաթղթերի առկայությունը բավարարած մասնակիցները հրավիրվում են գների նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա Նոր Նորքի 3-րդ միկրոշրջան, Գյուրջյան փող., 10 շենք հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0**

Գնահատող

հանձնաժողովի նախագահ՝

հանձնաժողովի անդամներ՝



Պ. Մանուկյան



Ձ. Բախշյան



Մ. Ստեփանյան

Գնումները համակարգող՝



Ե. Սարգսյան



[illegible]